

մամբ: Վերեւ յիշուած գրուածքներուն մեջ պրպտելով է որ կը գտնուին այն մասերը որ կը վերաբերին հայ վանօրէից պատմութեան: Երէ Երուսաղէմ չգտնուէի՝ դժուար քե կարենայի այս տեսակ պատմութիւն մը գրել, քանի որ մեծապէս դժուարին էին հայրայրել պատմական աղբիւրները: Այն քանակուն վանքերը ու եկեղեցիները՝ որոնց պատմութիւնը ու նկարագրութիւնը արդի մեքոսներով իմովանն կը տամ այս աշխատութեանս մեջ, իւրաքանչիւրը զատ զատ ուսումնասիրութիւններ ըլլալով՝ հարկ չը տեսայ պահել անոնց տեղագրութեան ու ժամանակագրութեան դասաւորումը. տուած ըլլալով մանաւանդ այս հաստատութեանց մէկ քանիներուն հիմնարկութեան բուսականներուն անորոշութիւնը, եւ իւրաքանչիւր վանքի եւ եկեղեցիի իրարու հետ ո՛րեւէ կապակցութիւն չունենալը: Աշխատած ենք ո՛րեւէ պատմական տեղեկութեան կցել անոր յիշատակարանը կամ տեղեկութեան աղբիւրը: 1927-1931 կը հրատարակէինք Սիոնի մեջ Հայ-Երուսաղէմի վանքերու պատմութիւնը եւ գիրքի վերածեցինք շատերու փափաքանաց վրայ՝ պարբերաբար ինչն յօդուածները կոկելով եւ յարգարելով զանոնք, միեւնոյն ժամանակ աւելի նոխացուցինք սոյն աշխատութիւնը նկարագրութեամբ նոր եւ աւելի կարեւոր վանքերու եւ եկեղեցիներու որ կը պակսին Սիոնի մեր յօդուածաւարտներուն մեջ:

Շարունակելի գործ մ'է մեր այս աշխատասիրութիւնը, վասն զի յայտնի է քե Ս. Երկրի հողը տակաւին կը պահէ իր մեջ յիշատակարաններ, ինչպէս նաեւ օտար պատմագիրներու տարբեր տեղեկութիւններու եջերը հաւանաբար ի յայտ պիտի բերեն աշխատութենէս դուրս մնացած վանքերու եւ եկեղեցիներու պատմութիւնը. յուսով եմ քե մեր ներկայ եւ ապագայ միաբանակից եղբայրները պիտի աշխատին իրենց ալ տալու ցոյք մը Հայ-Երուսաղէմի անցեալ յուսառող փառքերէն:

Այս ներածութիւնը վերջացնելէ յառաջ պարտք կ'զգամ յայտնել իմ անմոռաց երախտագիտութիւնը մեր բազմերախտ մեծ ուսուցչին եւ Ս. Արթուրոյս երջանկայիշատակ Գահակալ Տ. Եղիշէ Ս. արեւտա. Գուրեանի՝ որ աշխատութեանս պատրաստութեան սկիզբի տարիներուն շնորհ ըրած է յունարէն մի քանի հասուածքներուն հայերէն բարգմանութիւնը կատարել, ինչպէս յիշած ենք իր տեղը, եւ դիւրութիւններ տալ ինձ. կը խոնարհիմ իր յիշատակին առջեւ եւ հանգիտ կը մաղթեմ իր անմահ հոգւոյն համար: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: